ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» Սեպտեմբերի 2022թ. N ՄՈ/548 -2022

Ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի պահանջները, կրթության բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց», «Մարգարայի միջնակարգ դպրոց», «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց», «Մեծամորի միջնակարգ դպրոց» և «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ներում մշտադիտարկում և կազմակերպության գործունեության վերահսկողություն իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ն. Սարգսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել քսան աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության պետին (Դ. Դավթյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ 29.09.2022 **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

X

VERIFIED OCSP 29.09.2022 17:52:26 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2022 թվականի Սեպտեմբերի 29-ի
N ՄՈ/548-2022 որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ՝ Նաիրա Սարգսյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ՝ Արեգնազան Խլղաթյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի բաժնի ավագ մասնագետ՝ Գևորգ Մուրադյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար՝ Տաթևիկ Մկրտչյան:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 29.09.2022 17:34:05 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023